ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«01» 03 2024թ.
№ ՊՆԱԼ-ԳԳՀ-244

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 03524692
ՀՀ, ք. Աբովյան, Հատիսի 1/96
հեռ. +37493 68 00 06
էլ. հասցեն՝ vip-consalt@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության միջև 19.05.2022թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-22-10/6-1 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 01.03.2023թ. կնքված N2 համաձայնագրի շրջանակներում «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը N ՓՆՄԱՇՁԲ-22-10/6-1 պայմանագրի 01.03.2023թ. կնքված N2 համաձայնագրով նախատեսված 500,000,000 ՀՀ դրամի չափով աշխատանքներ /համաձայն փոփոխություն N2 499,273,050 ՀՀ դրամ/ պետք է կատարեր մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 15-ը, սակայն «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից կատարվել է ընդամենը 216,445,361 ՀՀ դրամի չափով աշխատանքներ, այսինքն N2 համաձայնագրով նախատեսված աշխատանքներից չեն կատարվել 282,827,689 ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

Հիմք ընդունելով Պայմանագր 3.1.4. կետի «ա» ենթակետը՝ (Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար) և «բ» ենթակետը՝ (Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. մարտի 1-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը 282,827,689 ՀՀ դրամի չափով չկատարված աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3,252,518 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի հպմաձայն), որը հաշվարկված է մինչև 18.01.2024թ. և 2,496,365 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 117,727,305 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 84,848,307 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. մարտի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 117,727,305 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 84,848,307 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. մարտի 7-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ